


ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ



Ամպերով եզերուած
Կապոյտ աչք մը անբարբ
Երկինքէն խանդակաբ
Կը նայէր դէպի ցած՝

Պարսէզիս պատին փոլ
Ծըլած ծաղկին ընտիր՝
Որ աչք մըն էր կարմիր
Թրջած ցօղ արցունքով:

Կը դիտէն լո՛ւռ զիրար
Ակնարկով մը՝ որուն
Անդուարը քրքուն
Հանանչ մըն էր զրկար:

Պահ մ'յետոյ նենգաւոր
Նոյն ամպերն ապափէն
Զընչեցին երկինքէն
Ծիծաղիտ աչքն աղուոր:

Ու ծաղիկն ալ սիրուն

Թուրմ քերքերն իր համակ
Թափըրվեց պատին տակ՝
Յորձանքէն հովերուն:

Բայց չէ՛ բնաւ վաղանցիկ
Մեր նայուածքն անհուն՝
Որ սուր պափն է հոգւոյն
Աննիւք ու գեղեցիկ:

Աչքեր, թէ իսկ չըլլաք
Կապոյտ կամ կրակէ,
Սիրսս, ա՛ն, կը փայլակէ,
Երբ ժրպփի, կամ երբ լաք:

Ոչ ամպը մըքազին
Կ'եղծէ ձեր բիքն աղու,
Ոչ ալ շունչը մահու
Շիջումն է ձեր նրագին:

Մ Ո Ւ Կ Ի Ո Ս Ս Կ Ե Ի Ո Ղ Ա

Սըխալող աչք որ ըսպաննեց մի այլ ոք

Փոխանակ արքային,

Ինքզինքն մըխեց կրակեղին մէջ բորբոք,

Պատիժ դըժոխային:

Թըւումին՝ հրաշալի այդ զոհէն անաբէկ՝

Չայնեց՝ որ պատանին

Գուրս ֆաշէն բըռնաբար այդ բոցէն ասրաւէկ,

Ու մէկդի գայն տանին:

Ինչ որ ա՛յսպէս այրեց Մուկիոսն անհամբոյր՝

Պորսեննա ակընդէտ գայն տեսնել չը ժուծեց.

Մեծ եղաւ սըխալող ձեռքին փառքն ու հրապոյր,

Ձի եթէ չը սխալէր՝ գործը չէ՛ր ըլլար մեծ:

Թրգով.

ՄՍՐՏԻԱՂԷՍ, Վերսաննիսներ